



ԴՐ. ՄԵՍՐՈՊ. Ծ. ՎՐԴ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Հոգևոր հովիվ Վիեննայի հայոց)

ՕՐՄԱՆՅԱՆ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԲԱՆ

Հայ եկեղեցւոյ և հայ պատմագրութեան կարկառուն դեմքերէն Մաղաքիա արքեպս. Օրմանյանի մասին հրատարակված կան շարք մը գրութիւններ. իբր պատմաբան, սակայն, դեռևս ան խոր ու մանրաքնին ուսումնասիրութեան մը առարկա եղած չէ: Կարճատոտ հոդվածի մը մէջ ալ անկարելի է ամբողջապէս ու արժանապէս ներկայացնել պատմաբան Օրմանյանը. հետևաբար գրութիւնն նախափորձ մըն է ամփոփ կերպով նկարագրելու անոր մեծ գործը և գործին բնորոշ գիծերը:

Ընդունակութիւնն ու պատրաստութիւնը

Հայոցս մէջ տարաբախտաբար երբեմն սխալ հասկացողութիւններ եղած են ու կան այսօր ևս պատմագրութեան մասին: Ոմանք խորհած են կամ կխորհին, թէ հանկարծակի փափաքով կամ ներշնչութեամբ կարելի է պատմագետ ու պատմագրող լինել: Մինչդեռ հիրավի պատմութիւնը, գիտութեան մյուս ճյուղերուն նման, կախահանգէ հատուկ ընդունակութիւն և պատրաստութիւն: Այստեղ Օրմանյանի առնչությամբ հարկ է շեշտել, որ ան պատմութեան amateur մը չէր, այլ ի բնէ ուղիմ անձ մը, որ իր իմացական կարողութիւնները զարգացնելով հանդերձ՝ մեղվաջանորեն ուսով Հոռմի մէջ և միտքը ամբարեց գիտությամբ: 1868-ին ան

մագիստրոսութեան աստիճանն ու տիտղոս ստացալ աստիճանութեան, իմաստասիրութեան և եկեղեցական իրավագիտութեան մէջ: Այդ ժամանակ արդեն, իբր քսանյութեամբ երիտասարդ կրօնավոր մը, քաջաբար գիտեր հայերէն գրաբար, հունարէն, լատիներէն, իտալերէն, ֆրանսերէն, գերմաներէն և թրքերէն լեզուները: Ահալասիկ այսպիսի բազմակողմանի պատրաստութիւն ունէր Օրմանյան, երբ Հասունյան-հակահասունյան վեճերուն առիթով կձեռնարկէր գրելու իր առաջին երկերը:

Առաջին գործերը

Հասունյան տագնապին առթիւ, Օրմանյան լինելով խորապէս հայրենասէր անձ մը, կողմնորոշվեցաւ ի նպաստ ազգային ուղղութեան և հանդիսացաւ հակահասունյաներու պարագլուխը: Ան ոչ միայն գործով և բանիւ, այլև գրչով պաշտպանեց արևելյան կաթողիկէ եկեղեցիներու ներքին անկախութեան հարցը: 1870—1873 տարիներուն ան հրատարակեց հետևյալ ջատագովական աշխատութիւնները.

1. Gli Armeni catholici orientali («Արևելեան կաթողիկէ Հայք»), Իսթանբուլ, 1870:
2. Il Reversurus, Հոռմ, 1872:
3. Les droits civils et la liberté religieuse des catholiques d'Orient («Քաղաքային իրավունք և կրօնական ազատութիւն Արևելքի կաթողիկէսաց»), Հոռմ, 1872:

Օրմանյան սրբազանի մահվան 50-ամյակի (1918 թ. նոյեմբերի 17) առթիւ հաճուքով հրատարակում ենք հոգ. տ. Մեսրոպ Ծ. վրդ. Գրիգորյանի սույն արժեքավոր ուսումնասիրութիւնը՝ որպէս երախտագի-

տութեան և հարգանքի սրտագին տուրք մեծանուն եկեղեցականի հիշատակի և մատենագրական մեծ վաստակի:

Խմբագրութիւն

4. La question arménienne («Հայկական հարցը», հոդվածք), Հոռն, 1872—1873:

5. Lettère sulla questione armena («Թուղթ ի վերա հայկական հարցի»), Բոնն, 1872—1873:

6. Le Vatican et les Arméniens («Վատիկանի և Հայք»), Հոռն, 1873:

Օրմանյանի այս սկզբնական երկերն իսկ թեպետ առավելաբար վիճաբանական բնույթ ունին, գրված են հմտությամբ, առողջ տրամաբանությամբ և հանդգնությամբ: Ահավասիկ թե ինչպե՞ս Չոպանյան կգնահատե հատկապես **Վատիկան և Հայք** գործը. «Հայն և ամուր հմտությամբ, հստակ ու ջղուտ տրամաբանությամբ և հանդուգն ու պայքարող ոճով գործ, որ բանակովական ոլորտեն կրթաբարձրանա, պատմական լուրջ աշխատության մը պատկանելի գույնն ունի»¹: Համեմատելու համար, Օրմանյան իբր մասնագետ հայ ժողովուրդի պատմության, ինքզինք դրսևորեց հայ եկեղեցիի անդամ և հոգևորական դառնալուն ետք:

Հոդվածները

Օրմանյան հայ եկեղեցիի պատմությամբ հանգամանորեն սկսավ պարապիլ, երբ 1889 թվին կոչվեցավ վարելու Արմաշի նորահաստատ դպրեվանքը: Այդ առթիվ ան իբր դասախոս պատրաստեց աստվածաբանության, ծիսագիտության և հայ եկեղեցիի պատմության դասագրքեր: Եկեղեցական պատմության ինչ-ինչ հատածներ՝ 1901 թվականին սկսյալ մաս առ մաս հրատարակեց Գյուտ Աղանյանց ավագ քահանայի **Լուծա** հանդեսին մեջ, Թիֆլիս: **Լուծան** լայն տեղ տվավ Մաղաքիա արքեպիսկոպոսի գիտական հոդվածներուն, որոնք կնկարագրեին Ամենայն Հայոց Հայրապետներու գործունեությունը և անոնց շրջանի քաղաքական ու մշակութային կարևոր երևույթներն ու դեպքերը: Այս գործությունները նախանշող եղան մեծ պատմաբանի ձեռքին, երբ նա կգրեր Հայաստանյայց եկեղեցվի ընդարձակ պատմությունը: Բաբգեն եպոս. Կյուլեներյան Օրմանյանի հրատարակություններու շարքին կնշե նաև «Ամենայն Հայոց Հայրապետները (**Լուծա** հանդեսի մեջ 35 հոդվածներ)»²:

Ստորև ես կնշանակեմ այն հոդվածները, որոնք ինձ ծանոթ են:

1. «Չորրորդ դարու հայ եկեղեցին».

- ա) Ս. Ս. Արիստակես Պարթև,
- բ) Ս. Ս. Վրթանես Պարթև,
- գ) Ս. Գրիգորիս Աղվանից կաթողիկոս,
- դ) Ս. Ս. Հուսիկ Պարթև,
- ե) Ս. Դանիել Ասորի,
- զ) Ս. Փառեն Աշտիշատեցի,

Լուծա, 1901, թ. 1, էջ 13—50:

2. «Մեծ Ներսես», 1901, թ. 2, էջ 65—112:

3. «Ներսես Մեծի հաջորդներ».

- ա) Ս. Ծախակ Մանազկերտացի,
- բ) Ս. Զավեն Մանազկերտացի,
- գ) Ս. Ասպուրակես Մանազկերտացի:

1902, թ. 2, էջ 135—152:

4. «Ս. Սահակ Պարթև» (ընդ որում՝ Ս. Սեպուրյակ թարգմանիչ), 1902, թ. 5, էջ 144—164, թ. 6, 138—159:

5. «Ս. Հովսեփ Հողոցմեցի», 1903, թ. 1, էջ 208—227, թ. 2, 122—138:

6. «Գյուտ կաթողիկոս»,

- ա) Ս. Մելիսե Մանազկերտացի,
- բ) Ս. Մովսես Մանազկերտացի,
- գ) Ս. Գյուտ Արախեզացի,

1903, թ. 4, էջ 107—119:

7. «Տ. Հովհան Մանդակունի», 1903, թ. 6, էջ 213—224, «Բաբգեն Որմեսցի», նույն անդ, էջ 224—227:

8. «Երկրորդ Պահլավունիք. Տ. Գրիգոր Բ Վկասաւեր», 1905, թ. 4, էջ 91—100, թ. 5, 102—109:

9. «Երկրորդ Պահլավունիք».

- ա) Ս. Բարսեղ Ա Անեցի,
- բ) Ս. Գրիգոր Գ Պահլավունի,

1905, թ. 8, էջ 68—75, թ. 9—10, 77—82:

10. «Տ. Ս. Ներսես Շնորհալի», 1906, թ. 7—8, էջ 153—168:

11. «Տ. Գրիգոր Դ Տղա», 1909, թ. 3, էջ 4—22:

12. «Տ. Գրիգոր Ա Քարավեժ», 1909, թ. 5—6, էջ 13—17. «Տ. Գրիգոր Զ Ապիրատ», էջ 17—37:

13. «Տ. Հովհաննես Զ Մեծաբարո», 1909, թ. 7—8, էջ 5—11. «Տ. Կոստանդին Ա Բարձրբերդցի», էջ 12—19:

14. «Տ. Կոստանդին Ա Բարձրբերդցի», 1909, թ. 9, էջ 9—13. «Տ. Հակոբ Ա Կլաւեցի», էջ 13—15. «Տ. Կոստանդին Բ Պրոնագործ», էջ 15—16. «Տ. Ստեփանոս Դ Հոռմկլաւեցի», էջ 17—18:

15. «Տ. Գրիգոր Է Անավարզեցի», 1909, թ. 10, էջ 12—21:

16. «Տ. Կոստանդին Գ Կեսարացի», 1909, թ. 11, էջ 46—52. «Տ. Կոստանդին Դ Լամբրոնացի», էջ 53:

17. «Տ. Հակոբ Բ Տարսնացի», 1909, թ. 12, էջ 23—30. «Տ. Միսիթար Գոնեբցի»,

¹ Արշակ Չոպանյան, Մկրտիչ Պեշկոպաշյանի կյանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 195:

² Ազգապատմ., Գ, էջ ԺԵ: Իմ ամենհասակ հետազոտությամբ հաշվեցի 25 հոդվածներ (!), որոս կը ներկայացվին 48 Հայրապետներ: 1901—1903 թթ. գործությունները անստորագիր են 1905—1906 թթ. հոդվածները կրկին «Քննաւեր» ստորագրությունը. 1909 տարվան առաջին 10 թիվերը ստորագրւյալ են «Մ. Ա. Օ.», իսկ 1909—1911 թթ. ուսումնասիրությունները՝ «Մաղաքիա Ան. Օրմանյան»:

30—34. «Տ. Հակոբ Բ Տաքսնացի, դարձ-
յալ», 34—35:

18. «Տ. Մեսրոպ Ա Արտագեցի», 1910,
թ. 1, էջ 12—14. «Տ. Կոստանդին Ե Սսեցի»,
14—15. «Տ. Պողոս Ա Սսեցի», 15—19:

19. «Տ. Թեոդորոս Բ Կիլիկեցի», 1910,
թ. 2, էջ 36—41. «Տ. Կարապետ Ա Կեղեցի»,
41—44:

20. «Տ. Հակոբ Գ Սսեցի», 1910, թ. 3, էջ
22—26:

21. «Տ. Գրիգոր Ը Խանձողատ», 1910, թ.
4, էջ 19—21. «Տ. Պողոս Բ Գառնեցի», 21—
—25:

22. «Տ. Կոստանդին Զ Վահկացի», 1910,
թ. 5—6, էջ 61—69:

23. «Տ. Գրիգոր Թ Մուսաբեգյան», 1910,
թ. 7—8, էջ 14—20. (Նույնը **Մուրճ**, 1903,
հուլիս-օգոստոս):

24. «Տ. Կիրակոս Ա Վիրապեցի», 1910,
թ. 9—10, էջ 10—18:

25. «Տ. Գրիգոր Ժ Զալաբեգյան», 1911,
թ. 1—2, էջ 79—91:

Գործերը

Օրմանյանի պատմա-գիտական գործերն
են.

1. **Հայոց եկեղեցին**, որ նախ ֆրանսերեն
լեզվով լույս տեսավ, և ապա հեղինակը
գայն «հայերենի վերածեց»: Անգղիերենի
թարգմանվեցավ G. Marcar Gregory-ի կող-
մանի, իսկ ռուսերենի՝ ձեռամբ A. M. Bou-
dagova-ի:

Ֆրանսերեն հրատարակությունը. — L'Ég-
lise Arménienne. Փարիզ, 1910, հրտ. Ernest
Leroux: Բ տպագրությունը կատարվեցավ
Անթիլաս, 1954 թ., ջանասիրությամբ պրն.
Տաճատ Սրապյանի և մեկենասությամբ
դոկտ. Գեղամ Հ. Այվազյանի:

Հայերեն հրատարակություն. — **Հայոց
եկեղեցին**, Իսթանբուլ, 1911, հրտ. Վ. և Հ.
Տեր-Ներսեսյան: Նույն հրատարակչական
տունը վերստին տպած է գիրքս 1912 և 1913
թվականներուն: Դ տպագրությունը կատար-
վեցավ 1949-ին, Բուենոս-Այրեսի մեջ, նա-
խաձեռնությամբ Գարեգին արքեպս. Խա-
չատուրյանի: Ե (Անթիլիաս, 1952) և Զ
(Պեյրուք, 1962) տպագրությունները եղան
պրն. Տ. Սրապյանի ջանքերուն շնորհիվ:

Անգղիերեն հրատարակություն. — The
Church of Armenia, Լոնդոն, 1912, հրտ.
A. R. Mowbray and Co: Բ տպագրություն՝
1955, հոստոն: Նոր հրատարակություն մը
20-րդ գլուխի հավելումով («Հասկերորդ
դար». պատմություն հայ եկեղեցվո) կա-
տարվեցավ Դերենիկ եպս. Փոլատյանի աշ-
խատանքով, 1955 թվին, Լոնդոն-Օքսֆորդ,

և տպագրության հրատարակչական տան
կողմից:

Ռուսերեն հրատարակություն. — Armians-
kaia Tzerkow, Մոսկվա, 1913, հրտ. Բար-
խուդարյան տպարանի:

2. **Ազգապատմ.** Հայ ուղղափառ եկե-
ղեցվո անցքերը սկիզբեն մինչև մեր օրերը
հարակից ազգային պարագաներով պատ-
մրված: Մասն Ա (սկիզբեն մինչև 1221):
Իսթանբուլ, 1912—1913, հրտ. Վ. և Հ. Տեր-
Ներսեսյան: Մասն Բ (1221—1808), Իս-
թանբուլ, 1913—1914, հրտ. Վ. և Հ. Տեր-
Ներսեսյան: Մասն Գ (1809—1909), Երու-
սաղեմ, 1927, հետ մահու հրատարակու-
թյուն՝ հոգողությամբ Բաբգեն եպս. Կյուլե-
սերյանի:

Ազգապատմի Բ տպագրությունը կա-
տարվեցավ Պեյրուք, 1959—1961, տպարան
Սևան, մեկենասությամբ պրն. Տաճատ
Սրապյանի:

Օրմանյան արքազանի երկասիրություն-
ներեն պատմական բնույթ ունին նաև **Աթոռ
Հայաստանյայց, Խոհք և Խոսք** (ինքնակեն-
սագրություն) և **Պատմություն Արմաշու**,
որոնք սակայն ուղղակի ուսումնասիրական
մեմագրություններ չլինելով՝ նկատի չեն
ստնված ներկա հոդվածին մեջ:

Հայոց եկեղեցին

Օրմանյան երբ կգրեր **Հայոց եկեղեցին**,
հրապարակի վրա չկար գիրք մը, որ համա-
ռոտ, բայց ճիշդ, բազմակողմանի և ամբող-
ջական կերպով հանրության մատուցաներ
հայ առաքելական եկեղեցին: Մովսիսյան
վարդապետի³, Կարապետ Ժ. վարդապետի⁴
և Աբրահամ Զամինյանի⁵ գործերը առավե-
րապես պատմական էին և կիսկատար:
Հե-
տեվաբար անհրաժեշտ էր հայ եկեղեցագի-
տության գեղեցիկ միահատորյակ մը, որ-
պեսզի հայն ու օտարը լավապես ճանչնան
այն եկեղեցին, որ փառքն ունի աշխարհի
պետականորեն ընդունված առաջին քրիս-
տոնեական հաստատությունը ըլլալու և իր
գոյության ու անաղարտ պահպանության
համար մեծ զոհողություններ հանձն առած
ըլլալու:

Հառասունհինգ գլուխներու մեջ Օրման-
յան պարզ լեզվով, հստակ ու համոզիչ
ոճով և տրամաբանական շարադրությամբ
կներկայացնե հայ եկեղեցին՝ էական կե-

³ Հուսիկ վրդ. Մովսիսյան, Հայաստանյայց առա-
քելական ս. եկեղեցվո պատմություն, Էջմիածին,
1884:

⁴ Կարապետ Ժ. վրդ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկե-
ղեցվո պատմություն, Ա մաս, Էջմիածին, 1908:

⁵ Աբրահամ Զամինյան, Հայոց եկեղեցու պատմու-
թյուն, Նոր Նախիջևան, 1908:

տերու մեջ նկարագրելով անոր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը, ազգային նկարագիրը և ազդեցությունը հայ ժողովուրդի ճակատագրին վրա: Պատմական բաժինը կրթականա տասնինը գլուխներե, ուր ազգային եկեղեցվո

— Միութենական ձգտումներ և հարաբերություններ.

— Մասնավոր Աթոռներ (Կիլիկիո և Կ. Պոլսո).

— Դ, Ե, ԺԷ («Զարթումի դարը»), ԺԸ և ԺԹ դարերու պատմության հատկացված են առանձին գլուխներ:



Տ. Մարդափա արքեպ. Օրմանյան

պատմությունը տրված է բնորոշ գիծերու մեջ: Օրմանյան հետևած է պատմության կամ պատմական դեպքերու զարգացումին, և սակայն նյութերը հավաքած է հիմնական խնդիրներու շուրջ: Այդ խնդիրներն են.

— Հայ եկեղեցվո ծագումն ու հաստատությունը.

— Հայ դպրություն.

— Քաղկեդոնական խնդիրներ.

— Ընդհանրական կաթողիկոսության տեղափոխությունները.

Ակարծեմ, թե հայ եկեղեցիի տասնինը դարերու պատմության այս դասավորումը լավ է, մանավանդ երբ նկատի առնենք, որ գլուխները ենթաբաժանումներ չունին: Օրմանյան իրաց և դիպաց պարզ նկարագրող մը չէ, այլ վերլուծող մը պատմության: Ահա թե ինչո՞ւ ան հաջողած է ճշգրիտ կերպով պատկերացնելու եկեղեցիին հառաջընթացքը, դժվարությունները, պայքարները և կարեվոր երևույթները: Չէ մոռցած նաև ըստ տեղվույն հերքելու այն թյուր կարծիքներն

ու մեղադրությունները, որոնք անադարաորեն վերագրված են հայ եկեղեցիին:

Հայ եկեղեցական պատմության հիմնական սկզբունքներն ու կարևոր հարցերու մասին Օրմանյանի տեսությունները անդին ուշադրությամբ պիտի քննվին. ուստի այստեղ կփափաքիմ վերլուծել միայն հայ եկեղեցիի խճ գլուխը, ուր հեղինակը կբացատրե հայ եկեղեցվու ազդեցությունը հայ ազգի բախտին վրա: Ընդդեմ անոնց, որ Հայաստանի անկումը կվերագրեն քրիստոնեության, ան կատարկե, թե նախ քրիստոնեության պետական կրոնը հռչակման և Արշակունյաց թագավորության կործանման միջև «ամբողջ մեկ ու կես դար միջոց մը անցած է»⁶. և երկրորդ՝ այդ կործանման «նախասկիզբները չորրորդ դարեն ալ առաջ են, և իրենց ծագումը կառնեն հռոմայեցվոց և պարթևաց մեջ մղված պատերազմներեն»⁷: Անոնց որ կդատափետեն Հայոց քրիստոնեությունը պահպանելը ի գին բազմաթիվ զոհերու ու մեծամեծ զոհողությանց, օրինակ պարսկական մազդեզականության դեմ, Օրմանյան դիտել կու տա, որ հարցը գուտ կրոնական չէր, այլ մանավանդ ազգային, որովհետև Տիգրան կհետամտեր ջնջել հայատակ ազգերու ազգային առանձնահատկությունները, և «եթե հայերն ալ այդ պայմանին (իմա կրոնափոխության) հպատակեին, իրենք ալ ուրիշ դեմի-մազդեզը ընդունող ազգությանց պէս, այսօր պարսիկ տարրին մեջ խառնված և իրենց իսկությունը կորսնցուցած պիտի ըլլային»⁸: Օրմանյանի տեսությունը կարելի է ամրացնել եկեղեցական պատմության հմուտ ուրիշ անձի մը՝ Երվանդ Տեր-Մինասյանի վկայությամբ, թե «եթե հայերը քրիստոնեությունը չընդունեին և կրոնով ու պետականությամբ միանային պարսիկների հետ, այդ իրողությունը ամենայն հավանականությամբ կը տաներ դեպի ձուլում իրանցիների հետ և հայ ժողովուրդը կդադարեր իբրև ազգային միավոր գոյություն ունենալուց»⁹:

Օրմանյան տրամաբանական պատասխանով մը կըմբերանե նաև այն անձերը, որոնք հայերուն անկման պատճառ կներկայացնեն իրենց ամուր հարումը ազգային եկեղեցիին: Այդպիսիներուն կրտ. «... Դրժվար չէ անցելույն մեջեն երևան հանել որ այն ամեն հայեր, որոնք անպայման կերպով հռոմեադավան կաթոլիկներուն հարեցան, հետզհետե կորսվեցան, մինչև իսկ

անուննին ալ չմնաց»¹⁰: Հուսկ ուրեմն մեծ պատմաբանը խորհրդածությունները կամփոփե հետևյալ առողջ եզրակացության մեջ. «Հալը, դարերն ի վեր քաղաքական միջոցեն զրկված, սերտ փարած է եկեղեցական կյանքին, և զայն ճանչցած է իբր փրկության խարխիս մը յուր ալեկոծ կյանքին մեջ: Անոր շնորհիվն է որ թեպետ վտանգված ու տկարացած, բայց վերջապես կրցած է յուր գոյությունը պահել, և մահացու արկածներուն մեջ կյանքը ապահովել»¹¹:

«Ազգապատում»-ի աղբյուրները

«Ազգապատում»-ի ստեղծման մեջ Օրմանյանի հաջողության գլխավոր պատճառներն մին իր աղբյուրներու ճոխությունն է: Ան օգտագործած է իր ժամանակին ծանոթ հայ բոլոր պատմիչներն ու այլ մատենագիրները, ինչպես և լատին ու հույն հեղինակություններ: Սկզբնաղբյուրներու կողքին ան իր ձեռին ունեցած է նաև հայերեն ու օտարալեզու բազմաթիվ հետազոտություններ հայոց պատմության, ընդհանուր եկեղեցվու պատմության և աշխարհագրության վերաբերյալ: Հայ մամուլն ալ, բանասիրական հանդեսներով, օրաթերթերով և շաբաթաթերթերով, օգտակար եղած է անոր:

Օրմանյան իր աշխատանքը չէ տահմանափակած տպագիր նյութերու պարունակին մեջ: Ան **Ազգապատում**ի համար ատաղձ հավաքած է նաև շարք մը ձեռագրական աղբյուրներ: Ատոնցմե հիշատակելի են՝ Սարգիս դպիր Սարաֆ-Հովհաննեսյանի գրությանց ձեռագիր հավաքածուն, Գիրք կանոնաց և դատաստանի, Տոնացույց ծոցի ի Ստեփանոս Գոյներիցանց, Գրիգոր վրդ. Դարանաղցիի Աստվածաշունչին հիշատակարանները, Կիլիկյան կսկիծներ (Ստ կաթողիկոսարանի դիվանեն քաղված նամակներու պատճեններ, 1903—1915 թթ.), «Ռտանավոր բան» Մարտիրոս Դրիմեցիի և այլն: Ի տարբերություն կարգ մը ալ գրողներու, Օրմանյան ամենայն բծախնդրությամբ և պարկեշտությամբ միշտ նշանակած է իր աղբյուրները բնագրի մեջ, բայց ոչ էջերու ներքև, որպեսզի «ընթերցողին ուշադրությունը չկաշկանդե»¹²:

Աղբյուրներու առատությունն ու բազմազանությունը շատ նպաստած են, որ մեծ պատմաբանը կարենա մնայուն կողողական գործ մը՝ հայ ժողովուրդի 1900 տարիներու պատմության արձանագիրը կանգնել հաջողապես:

⁶ Հայոց եկեղեցին, Ամթիլիաս, 1952, էջ 192:

⁷ Նույն անդ:

⁸ Նույն անդ, էջ 192—193:

⁹ Երվանդ Տեր-Մինասյան, Ոսկեդարի հայ գրականությունը, Երևան, 1946, էջ 7:

¹⁰ Հայոց եկեղեցին, էջ 193:

¹¹ Նույն անդ, էջ 194:

¹² Ազգապատում, էջ 11 («Ճախագիտելիք»):

Հիմնական սկզբունք

Օրմանյան հիմնական որոշ սկզբունքներու հետևած է **Հայոց եկեղեցին** և **Ազգապատումը** գրելու ատեն: Երկար կյանի հողվածի մը մեջ քննել բոլոր այդ սկզբունքները. հետևաբար ես կհայտարարեմ կարևորագույնները.

1. Օրմանյանի համար և իրականության մեջ հայ եկեղեցական պատմությունը չի կրնար գրվիլ անջատաբար հայոց ընդհանուր պատմութենեն, որովհետև, մասնավորապես անցյալին, եկեղեցին հիմնական ստանգքն ու առաջնորդը եղած է հայկական կյանքի: Այս տեսությամբ Օրմանյան լայն տեղ տված է եկեղեցական իրաց և դիպաց կողքին քաղաքական անցուդարձերուն, ինչպես և մատենագիրներու և գրական երևույթներու: Հետևաբար **Ազգապատում** տիտղոսը, որ թարգմանի «Պատմություն հայոց ազգի», լիապես կարդարանա աշխատության բովանդակությամբ:

2. Պարզ է, որ հսկա գործ մը մոտավորապես 2800 մեծադիր էջերն (=5600 սյունակ) բաղկացյալ, դյուրին չէ բաժնել ըստ նյութի կամ շրջանի: Ինչպես տեսանք, **Հայոց եկեղեցին** մեջ Օրմանյան պատմությունը բաժնած է որոշ հարցերու, իրադարձություններու և դարերու վրա: Բայց **Ազգապատում**ի պարագային կաթողիկոսներու անուններուն տակ դասավորած է խնդիրներն ու եղելությունները: Կարևոր է անդրադառնալ, որ ասիկա ձևական բաժանում մըն է՝ պահելու համար դեպքերու շարահարությունը¹³: Եթե հեղինակը ուրիշ մեթոդ մը գործադրեր, պիտի չկարենար եկեղեցական ու քաղաքական անցուդարձերը միահար ու համաչափ կերպով շարադրել:

3. Օրմանյան յուրաքանչյուր կաթողիկոսի համար մակդիր մը տված է՝ նկատի ունենալով ենթակային բնավայրը կամ գործունեության շրջանակը: Այս ուղղությամբ կըսեն. «Մենք անհրաժեշտ դատած ենք, յուրաքանչյուր հայրապետի մակդիր անուն մը գործածել, վստահ զի կարգի թվահամարը, որով սովոր են հիշվիլ գահակալներ և աթոռակալներ, հին ատեններ գործածական չէ եղած և նորերուն ալ կազմածները իրարու անհարմար են, և հնար չէ իբրև որոշիչ հատկանիշ կամ հատուկ անուն մը ճանչնալ կարգի թվահամարները»¹⁴: Մեծ պատմաբանին կաթողիկոսներու համար որոշած մակդիրները տեսակ մը նվիրական ու վերջնական անուններ են, որոնք ընդունված են և նույնությամբ կգործածվին նոր հեղինակներու կողմեն:

4. Հայ եկեղեցիի օրինական կաթողիկոս են անոնք, որ ազգին ու եկեղեցիին միահամուռ կամքով ընտրված են: Այս սկզբունքի հիման վրա, Օրմանյան արդարև և իրավամբ **հակաթոռ** հռչակված է և հայրապետներու կանոնական ցանկեն դուրս թողած այն անձերը, որ բռնի գահակալած են՝ օտար տերության մը հովանիին ներքև, հակառակ եկեղեցականներու և ժողովուրդի մեծամասնության կամքին:

5. Օրմանյան իր դատումներուն և եզրակացություններուն մեջ իբր մեկնակետ ունեցած է այն ճշմարիտ սկզբունքը, որ կաթողիկոսներ մարդկայնորեն սխալական են ու իրենց սայթաքումները լոկ անձնական բրնույթ կկրեն և երբեք չեն կարող եկեղեցվո պաշտոնական դիրքին ու դավանության վրա ազդել: Ան կգրեն. «Համարձակ կհայտարարենք ևս, թե վարդապետներ և եպիսկոպոսներ, և մինչև իսկ կաթողիկոսներ ալ գտնվեցան, որ հայ եկեղեցվո նախնական ավանդությանց և սկզբանց հակառակ խտեցան կամ գրեցին: Բայց անանկներուն տեսությունները իրենց անձնականն անդին չէին կրնար անցնիլ, և իրենց անհամաձայնությունը չէր կրնար խախտել կամ փոփոխել հայ եկեղեցվո հիմնական դավանությունը, որ փոփոխելի կետ մը չէ»¹⁵:

Կարևոր հարցեր

Օրմանյան ըլլալով գորավոր տրամաբանության տեր և գիտուն անձ մը, ճիշտ լուծում տված է առհասարակ հայոց պատմության, հատկապես եկեղեցական պատմության հարցերուն և արդարորեն դատած վիճելի դեպքերն ու դեմքերը: Ես կբավականանամ հիշելով քանի մը օրինակներ, իբր հաստատություն կարծիքիս:

Հայ եկեղեցվո առաքելական ծագումը հայոցս համար անկասկածելի և նվիրական իրողություն մըն է, որ և ընդունված է հայ և օտար ողջմիտ հեղինակներեն: Ոմանք սակայն իզուր ճգնած են և կճգնին մերժել հայ եկեղեցիի առաքելական հանգամանքը: Օրմանյան պատմական և ավանդական տվյալները հառաջ բերելն ետք կըսեն այդպիսիներուն. «Եթե ոմանց համար շատ գորավոր չերնիր հայոց եկեղեցվուն առաքելական հանգամանքը, հարկ կտեսնեք դիտել տալ, թե ավելի գորավոր չեն ուրիշ եկեղեցիներուն առաքելականության ավանդություններն ալ, և նույնիսկ Պետրոսի Հոռոմ երթալուն պատմությունը կամ Հովհաննեսի Եփեսոս գտնըված լինելը, քննադատներն իբր անվիճելի ստուգություններ չեն նկատվիր. թե-

¹³ **Ազգապատում**, էջ 12 (պրբ. ԺԲ և ԺԳ):

¹⁴ **Ազգապատում**, էջ 1937:

¹⁵ **Հայոց եկեղեցին**, էջ 110:

պետ և լատինական և հունական եկեղեցիներ այդ ավանդությանց վրա կհիմնեն իրենց առաքելականությունը: Եթե հունա-հռոմեական աշխարհին գործերն ալ պարզ կամ տկար ավանդություններով կորոշվին, որչափ ևս առավել Արևելքին և ներքին արեւելեքին և այբուբենքե գուրկ Հայաստանին եղելությունները»¹⁶:

Հնդհանրական հայրապետության Աթոռի Կիլիկիայէ Էջմիածին փոխադրության առընչությամբ Օրմանյան կղիրքորոշվի ի նպաստ Էջմիածնի: Ան Աթոռին 1441 թվի փոխադրությունը անհրաժեշտ կգտնե, քանի որ նախ, կիլիկյան թագավորությունը, որ կրնար քաղաքական նեցուկ մը ըլլալ կաթողիկոսության՝ կործանած էր, և երկրորդ, Ստեփանեղեցականությունը՝ առհասարակ անկյալ վիճակ մը ուներ. և հետևաբար այլևս ունէ արդարացուցիչ պատճառ չկար, որ ընդհանրական կաթողիկոսությունը «իր նախնական և նվիրական սրբալաւրեն դուրս թափառեր»¹⁷:

Առողջ է նաև Օրմանյանի քաղաքական ուղղությունը: Ջանազան առիթներով ան կձառկէ հայոց անհետատես քաղաքականությունը, որով փոխանակ Արևելքի մերձակա ուշերուն հետ համաձայնելու կամ բարեկամանալու՝ Արևմուտքի ապարդյուն օգնությանց կոչմանն¹⁸: Հայոց բնական ձգտումն ու քաղաքականությունն ալ այսպէս կնկարագրե ան. «... Ամեն բարեմիտ հայ՝ ուրիշ փափաք չունի, բայց եթէ յոր դրացիներուն հետ խաղաղ ու հաշտ ապրիլ: Հայուն պահանջն է որ վնաս չհասնի իր կյանքին, իր պատիվին, իր ստացության, իր աշխատության: ... Այս օրինակով պահանջներուն հետ կփափաքի ալ, որ հաստատուն պահե յոր ազգային ինքնությունը, իր լեզուն ու իր գրականությունը»¹⁹:

1956 թվին, երբ Կիլիկիոյ Աթոռական իր ընտրութենէն անմիջապէս ետք գործունէության կձեռնարկեր, հարց ծագեցաւ, թէ ընտրյալ մը իրավունք ունե՞ր իբր կաթողիկոս շարժելու: Այս խնդրին պատասխանն ու ճիշտ լուծումը մենք գտանք Ազգապատումի մեջ: Օրմանյան խոսելով Հովսէփ Արղւթյանի մասին, որ կաթողիկոս ընտրված էր, սակայն մահացած օծում ստանալէ առաջ, կըսէ. «Այսչափ ճիգերէ ետք՝ ձրգտումներուն լրումը իրեն պակսեցաւ, զի

յոր անունը չենք կրնար անցընել կաթողիկոսաց շարքին մեջ, և լոկ ընտրվածները, առանց միտոնի նվիրագործման և առանց օծումի, կաթողիկոս չենք կրնար հռչակել: ... Ընտրյալը օծյալ մը չէ, և օծյալ չեղողը կաթողիկոս չէ. այս է մէջ եկեղեցւոյն կանոնը և Մաշտոցին կանոնաւան՝ կարգադրությունը: Ումանք սովոր են Հովսէփի կաթողիկոս տիտղոսով անվանել... սակայն մենք չենք ուզեր հաստատուն կանոններէն շեղիլ և ընտրյալ Հովսէփը՝ Հովսէփ կաթողիկոս ճանչնալ, ինչպէս որ նշանվածն էրը՝ պատկած չենք ընդունիր»²⁰: Գեորգ Սեւրոպ²¹ և Մեարոպ վրդ.²² հետևելով Օրմանյանի՝ կաթողիկոսաց շարքէն դուրս թողած են Արղւթյանը:

Ազգապատումը հայ եկեղեցագիտության համայնագիտարան մըն է, որ օգնության կարող է փութալ պատմությանը հետաքրքիր անձերու կամ բանասերներու, երբ անոնք պատմական և կամ կանոնական խնդիրներ ունին ճշտելիք:

Ժամանակագրությունը

Ժամանակագրությունը խարխիւն է պատմության, և պատմությունը ճիշտ չէ առանց ժամանակագրության: Օրմանյան իր երկասիրությանց մեջ առաջնորդ ունենալով այս սկզբունքը, մեծ կարևորություն ընծայած է ժամանակագրության, և դեպքերը պատմելու ստեն ճշդած է անոնց թվականները: Հայոց պատմությանը առավել կամ նվազ չափով հետաքրքրված անձինք գիտեն, թէ որքա՞ն խառն են ու թերի մեր հին պատմագիրքերու ժամանակագրական տվյալները, և թէ որքա՞ն ճիգ, պատրաստություն և աղբյուր ունենալով է հեղինակ մը՝ հաղթահարելու համար դժվարությունները:

Օրմանյան հայկական պատմության ժամանակագրությունը ճշդությամբ վերականգնելու աշխատանքին մեջ օգտագործած է հայ և օտար մատենագիրներու պատմություններն ու քրոնիկները, և իր ժամանակին ծանոթ քննական ուսումնասիրությունները: Աղբյուրներու կողքին ան նկատի առած է հայոց հին շարժական տոմարը, ինչպէս և պարսկական և իսլամական (հիճրի) տոմարական դրությունները: Հատկապէս հայկական տոմարի մասնագետ մը լինելով, և աղբյուրներ կազմած ունենալով, հաջողած է

¹⁶ Ազգապատում, էջ 33 հմմտ. Հայոց եկեղեցին, էջ 3—5:

¹⁷ Ազգապատում, էջ 2102—2103:

¹⁸ Կարոյա Ազգապատում, էջ 1948—1950 և 5058—5066:

¹⁹ Հայոց եկեղեցին, էջ 195:

²⁰ Ազգապատում, էջ 3278:

²¹ Գեորգ Մեարոպ, Պատմություն հայ եկեղեցւոյ, Իրթանքով, Բ, 1914, էջ 455, 459—460 և 572:

²² Մեարոպ վ. Գ. Գրիգորյան, Պատմություն հայ եկեղեցիի, Պեյրութ, 1957, էջ 202:

բազմաթիվ թվականներ ճշորոշել և անհիշատակ ամսաթիվեր երևան հանել: Դեպքերը դատելու և իրադարձությունները կապակցելու յուր իմացական կարողությունն ալ օժանդակ եղած է, որ ճիշդ եզրակացություններու հանգի՝ հակասական վկայություններու պարագային: Որպեսզի լոկ խոսքեր ըսած չըլլամ և բացատրություններս օրինակներով հաստատեմ, աչտեղ կփափաքիմ ներկայացնել կարգ մը ժամանակագրական հարցեր և անոնց լուծումները, զորս տված է Օրմանյան:

— Հովհաննես Ա Մանդակունիի կաթողիկոսության շրջանին համար պատմագիրներ և ցուցակագիրներ երկու տարբեր հանիվներ կուտան, ոմանք 6 և այլք 12: «Քանի որ այդ երկու թիվերը անալիզայի կերպով կկրկնվին ընդհանրապես, — կգրե Օրմանյան, — հնար չէ ո՛չ պատահական սխալանաց և ո՛չ թվանշան տատերու նմանության վերագրել այդ տարբերությունը, և ո՛չ ալ հնար է մին մյուսին զոհելով մեկ կողմ թողուլ»²³: Ուստի կեզրակացնեմ, թե Մանդակունի գահակալած է 12 տարի, բայց երկու շրջաններու մեջ. ա) Վեց տարի Վահանյանց շարժումի ընթացքին (478—484), և բ) Վեց տարի ալ խաղաղության հաստատվելեն (484—485) ետք (մինչև 490), «երբ իրեն ալ կաթողիկոսությունը պաշտոնական գործություն ստացավ պետական վավերացմամբ»²⁴:

— Բազմեն Ա Ռթսեցիի գահակալության տևողությունը առհասարակ 5 կամ 6 տարի նշանակված է մատենագիրներեն: Ասոր նախորդին (Հովհաննես Մանդակունի, 478—490) և հաջորդին (Սամվել Արծեյեցի, 516—526) միջև սակայն 26 տարիներու ժամանակամիջոց մը կա: Օրմանյան սույն 26 տարիները իրավունքով կվերագրե Ռթսեցիի և իր տեսությունը կհաստատե **Թուղթ հալոց ի Պարսս** գրությամբ, ուր ան հիշված է 506 թվին, «ուրտատասներորդ ամի Կատապարքայից արքայի»²⁵ և ավելի ուշ²⁶: Պատմիչներու վկայությանց և իր եզրակացության տարբերությունն ալ, մեծ պատմաբանը կբացատրե հետևյալ արամիտ դիտողությամբ. «Եթե ներյալ է ենթադրական մեկնաբանություն մը տալ տարօրինակ տարբերության, պիտի ըսենք թե թվատարով գրված ին կամ ի՞նչ թվականներուն մեջ

թվանշան «Ի» տառը նախորդ ի տառի փոխվելով, թվականը գրչագիրներու ձեռքին տակ աղավաղված է և միայն «Ե» կամ «Զ» տառերը իբր թվանշան մնացած են, և այնպես ալ մեկեն մյուսին անցած են»²⁷:

— Հայ եկեղեցվո մեծագույն վարդապետներեն Գրիգոր Տաթևացիի վախճանման ամիսն ու օրը հաղորդված չեն, այլ միայն Մեծոփեցիե ըսված է՝ «յառոր սօնի նախավկային Ստեփանոսի մեծի առաքելոք»²⁸: Ստեփանոսի տոնին դեկտեմբերի մեջ լինելը պարզ է. բայց ինչ որ կարևոր է, Օրմանյան ճշդած է, թե 1410—11 թվականին երբ վախճանեցավ Տաթևացին, այդ տոնը հանդիպած է դեկտեմբերի 25-ին կամ հաշվական տոմարով՝ 860 Նավասարդի 17-ին²⁹:

— Գրիգոր ԺԱ Բյուզանդացի կաթողիկոսի օրով պատահած է ութերորդ ծագատիկը: Եղիա արեղա Ջերմուկցի զայն կնշանակե 1540 թվին³⁰: Ըստ Օրմանյանի, ամեն հինգ հարյուրյակի մեջ միայն չորս անգամ ծագատիկ կհանդիպեր, 95 տարիներու հետադարձությամբ, և հետևող 247 տարիներու ժամանակամիջոցը կանցներ առանց ծագատիկի: Այս հիման վրա մեծ պատմաբանը կեզրակացնե, թե խնդրո առարկա ծագատիկը պատահած է 1539-ին, նախորդ՝ 1292 թվին տեղի ունեցած ըլլալով³¹:

Կհուսամ հիշյալ օրինակները բավական են՝ գաղափար մը տալու ի մասին Օրմանյանի կատարած հսկա աշխատանքին, հայ ժամանակագրության վերա: Ընթերցողը պատկերացնելու է, թե նա որքա՛ն թվականներ որոշած է ճարտարորեն, և առաջին անգամ լինելով մշակած հայ ժողովուրդի և հատկապես հայ եկեղեցվո պատմության մեծավ մասամբ ճիշդ ու ամբողջական ժամանակագրությունը: Ահա թե ինչո՛ւ Հրաչյա Աճառյան իր կոթողական գործերեն մին՝ **Հալոց անձնանունների բառարանը**, հիմնած է Օրմանյանի թվականներուն վրա: Լսենք այս մեծահամբավ բանասերին կարծիքը.

«Պատմությունը առանց ժամանակագրության արժեք չունի. այս պատճառով հատուկ ուշադրություն եմ դարձրել թվա-

²⁷ Ազգապատում, էջ 490:

²⁸ Թովմա վրդ. Մեծոփեցի, Պատմություն Լանգթամուրայ և յաջորդաց իրոց, Փարիզ, 1860, էջ 60:

²⁹ Ազգապատում, էջ 2027:

³⁰ Գարեգին վրդ. Սրվանդությանց, Թուրոս աղբար, Իսթանբուլ, 1879, Բ, էջ 454:

³¹ Ազգապատում, էջ 2233—34:

²³ Ազգապատում, էջ 474—75:

²⁴ Նույն անդ, էջ 475:

²⁵ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 42, և Ազգապատում, էջ 489:

²⁶ Գիրք թղթոց, էջ 48, և Ազգապատում, էջ 489:

կանների ճշրության: Հայոց պատմության ժամանակագրությունը կատարյալ ճշրությամբ ծանոթ չէ մեզ: Չամչյանի տված թվականները վերջնական չեն. իսկ Հայկազանց շրջանի թվականները, ինչպես սպասելի էր, առատելական են: **Լավագույն աղբյուրը հայոց պատմության թվականների մասին՝ Օրմանյանի Ազգապատմն է:** Այս հեղինակը աշխատել է պատմիչների տված թվականները ոչ միայն պատմական ու մատենագրական, այլև տոնական ու տոմարական հաշիվներով էլ ստուգել, և տվել է ամենաճիշդ թվականները: Ես էլ ընդհանրապես հետևել եմ նրան: Ընթերցողը իմ գրքի մեջ շարունակ պիտի տեսնի չակերտի մեջ դրված թվականներ. այդ բոլորը Օրմանյանից է վերցրած: Իսկ ուր որ չակերտ չկա, ուրիշ աղբյուրից է և կամ ուղղակի բնագիր հիշատակարաններից»³²:

Աճառյան միակ հիացողն ու գնահատողը չէ **Ազգապատմ**ի թվականներում: Արտասահմանի և հայրենիքի ուսումնասիրները առհասարակ օգտագործած են ու կօգտագործեն հայոց պատմության սույն համայնագիտարանը: Հակոբ Մանանդյան այսպես կարտահայտվի **Հանդես ամսօրյայի**³³ մեջ լույս տեսած Օրմանյանի մեկ ժամանակագրական գրության մասին, «Հայ Արշակունիների ժամանակագրության մասին ուշագրավ է և արժեքավոր Մ. Օրմանյանի կարևոր հոդվածը՝ «Տրդատե Արտաշես ժամանակագրական դիտողություններ»»³⁴:

Անշուշտ անհերթելություն պիտի ըլլա ըսելն, թե Օրմանյանի թվականները անթերի են կամ կատարյալ: Հայտ է, թե ամեն ազգի պատմությունը վիրավոր է ժամանակագրական շփոթություններով ու անորոշություններով, և պարզ է, որ պատմագիտական գործեր ընդհանրապես կունենան սրբագրելի մասեր՝ ըստ նորագույն հայտնության: Հետևաբար **Հայոց եկեղեցիին և Ազգապատմ**ի մեջ ալ բնականորեն կան անճշդություններ, որոնք արդյունքն են աղբյուրներու պակասին կամ անհստակության: Հարկ է նաև ավելացնել, թե պարսից, արաբներու, մոնղոլներու

և այլ ժողովուրդներու պատմության վերաբերյալ ժամանակագրական սխալները ճակատագրական չեն և դյուրավ կճշդվին: Օրմանյան իր ատենին ավելին չէր կարող ընել: Արժեքավորն ու մնացուցիկն անոր գործին մեջ բուն իսկ ազգային պատմության թվականներու վերականգնումն է, ինչ որ գիտականության և ամբողջականության տեսակետներն աննախընթաց էր և այսօր ալ դեռ կմնա անգերազանց:

Վերատեսության հարցը

Ազգապատմը որքան ալ գիտական գործ, իբր ընդարձակ պատմագիրք մը՝ գերծ չէ թերիներե: Նախ, հեղինակը Խաթանույի հայոց պատրիարքության մասին գրելու ատեն կարելիությունը չէ ունեցած օգտվելու հայկական և թրքական արխիվներն. մինչ Երուսաղեմի պատմությունը ճոխացուցած է տեղվույն դիվանական թուղթերու փաստերով: Եվ երկրորդ, **Ազգապատմ**ի հրատարակութենեն ետք հայտնված են նոր աղբյուրներ և գրված նոր ուսումնասիրություններ: Օրմանյան ինք ալ ատենին համաձայնություն ու փափաք հայտնած է որ իր աշխատությունը երկրորդ տպագրությամբ մը կատարելագործվի³⁵:

1958-ին, երբ պրոֆ. Տաճատ Սրապյան կձեռնարկե **Ազգապատմ**ի՝ Բ տպագրության, կազմվեցաւ գիտական հանձնախումբ մը (Ծանե վրդ. Աճեմյան, Սիմոն Սիմոնյան և Մեսրոպ վ. Գ. Գրիգորյան), որ պիտի զբաղեր վերատեսության հարցով: Հանձնախումբը թղթակցությամբ խնդրեց կարծիքը Հայաստանի և արտասահմանի կարևոր բանասերներու: Գիտականներու թեյադրությանց գլխավոր կետերն էին. ա) Անխախտ ու ամբողջ պահել **Ազգապատմ**ի բնագիրքը. բ) սակայն անպաշտնալի կատարել ծանոթագրություններով: Այս տեսակետը շեշտեցին հայրենի պատմաբանները՝ Մատենադարանի տեսուչ դր. Լևոն Խաչիկյանի նամակին միջոցաւ: Հանձնախումբը, համաձայն եղած՝ առաջարկություններուն, որոշեց հայագիտական պատմա-մատենագրական նորությունները համատեղել յուրաքանչյուր հատորիկի վերջավորության: Մեսրոպ վրդ. պիտի գրեր առաջին 700 տարիներու պատմության վերաբերյալ ծանոթությունները. 700—1400 թթ. մասին հավելումները պիտի մշակեր Ծանե վարդապետ. իսկ Սիմոն Սիմոնյան 1400—1910

³² Հ. Աճառյան, Հայոց անճանաչողների բառարան, Երևան, Ա, 1942, էջ X:

³³ Մ. Ա. Օ. «Տրդատե Արտաշես ժամանակագրական դիտողություններ», **Հանդես Ամսօրյա**, 1909, թ. 7 և 8, էջ 197—201 և 241—246:

³⁴ Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, Բ, մասն Ա, 1957, էջ 156:

³⁵ **Ազգապատմ**, էջ 12—13:

չրջանի ծանոթագրությունները պիտի պատրաստեն: Ռժբախտաբար խաչ հրագրին առաջին մասը միայն կարելի եղավ իրագործել, որովհետև Ծախե վարդապետ Երուսաղեմի գործերով կլանվեցավ, պրն. Սիմոնյան տպարան Սևանի ծանր քեռան տակ կքած՝ ազատ ժամանակ չրկրցավ ունենալ, իսկ Մեսրոպ վրդ. ալ ուսումնական պատճառով մեկնեցավ Անգրդիա: Համենայն դեպս, անկախաբար Ա. կամ Բ տպագրութենեն, դեռևս կարելի է՝ ա) Առանձին գիրքի մը մեջ նոր ու ամբողջական ծանոթություններ խմբագրել. բ) 1910—1960 թվականներու եկեղեցական պատմությունը գրել և գ) Հատուկ անուններու ցանկեր ավելացնել³⁶:

³⁶ 1962 թվի հոկտեմբերին Լուս-Աննիսի ս. Հակոբ եկեղեցվո հոգևոր հովիվ տ. Տիրապր վրդ. Տիրվիշյան Երևանի մեջ ինձ հայտնեց, թե ինք պատրաստած է Ազգապատմի անձնանուններու և տեղանուններու ցանկերը:

Որպես եզրակացություն

Ինչպես ի հառաջագունե հայտարարեցի, ներկա հոդվածը նախափորձ մըն է գծագրելու Օրմանյանի դեմքը իբր պատմաբան: Բնականորեն կարելի է երբեմն համաձայն չըլլալ իր դատումներուն, սակայն կարելի չէ ուրանալ իր պատմագիտական մեծ վաստակը: Այս իսկական հայրենասերը, այս դիվանագետ պատրիարքը և այս մեծ պատմաբանը շատ գրել տված է իր մասին, և հետ այսորիկ ալ դեռ գրել պիտի տա իր բացակայության: Օրմանյանի կյանքը կամ ուղղությունը դատելն այլոց թողլով, ես այստեղ կուգեմ արձանագրել, որ անոր Ազգապատմը իբր փաստական նյութերով հագեցված, գիտական մեթոդով մշակյալ և ուղիղ դատողությամբ գրված ընդարձակ հայոց պատմություն մը, անմոռաց երախտիք մը պիտի մնա հայ պատմագրության մեջ:

